ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 0232-3-67-91 norerznka-village@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 145

ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 31-րդ հոդվածը 2020 թվականի բյուջետային գործընթացը սկսելու նպատակով՝ *որոշում եմ.*

1. Նոր Երզնկայի համայնքապետարանի աշխատակազմին և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարներին մինչև 2019 թվականի նոյեմբերի 21-ը ներկայացնել բյուջետային ֆինանսավորման հայտերը, կազմակերպությունների պահպանման ծախսերի նախահաշիվները՝ համայնքի բյուջեի նախագիծը կազմելու աշխատանքները կազմակերպելու համար:
2. Ապահովել 2020 թվականի ընթացքում իրականացվելիք ծրագրային բյուջետավորման ներդրման ուղղությամբ նախապատրաստական աշխատանքների իրականացումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ԳՐԻԳՈՐ ՄԱՐԴՈՅԱՆ

20 __ թ. _____ ____
գ.Նոր Երզնկա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 0232-3-67-91 norerznka-village@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 146

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները, ինչպես նաև Սերգեյ Մինասյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Բավարարել Սերգեյ Մինասյանի դիմումը և տալ շինարարության թույլտվություն Նոր Երզնկա համայնքի 3-րդ փողոց թիվ 36 հասցեում բնակելի տան կառուցման շինարարական աշխատանքներ կատարելու համար:
2. Հանձնարարել Նոր Երզնկա համայնքի համայնքապետարանի գլխավոր մասնագետ Լ. Խուրշուդյանին նախապատրաստել և համայնքի ղեկավարի հաստատմանը ներկայացնել <<Քաղաքաշինության մասին>> օրենքով սահմանված անհրաժեշտ փաստաթղթեր:
3. Սույն փաստաթուղթը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ԳՐԻԳՈՐ ՄԱՐԴՈՅԱՆ

20 __ թ. _____

գ.Նոր Երզնկա